2021, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (583)

Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցը Սյունիք եւ Արցախի Հանրապետություն

Հունիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական քառօրյա այցով մեկնեց Սյունիքի մարզ եւ Արցախի Հանրապետություն: Այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման հարցերով գրասենյակի տնօրեն Գարեգին վրդ. Համբարձումյանը, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Մովսես վրդ. Սարգսյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ ավդ քհն. Մելիքյանը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր նաեւ ՀԲԸՄ-ի նախագահ տիար Պերճ Սեդրակյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը Գորիսի «Զանգեր» հուշարձանի մոտ դիմավորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վրդ. Հակոբյանը՝ թեմի հոգեւոր դասի հետ միասին, Գորիսի համայնքապետ Առուշան Առուշանյանը, Սիսիանի համայնքապետ Արթուր Սարգսյանը, Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը, զինվորականներ եւ Գորիսի համայնքային:

Ավանդական աղուհացի արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին եւ հավաքված ժողովրդին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀԲԸՄ-ի նախագահի եւ հոգեւոր դասի հետ միասին մեկնեց Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին Գորիսի բնակիչներն ու զինվորները: Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, մուտք գործեց տաճար, ուր սաղմոսերգությունից եւ աղոթքից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի եւ Արցախի անսասանության, Սյունյաց աշխարհի եւ նրա ժողովրդի անվտանգ, խաղաղ ու բարօր կյանքի համար:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց ներկա ժողովրդին. *«Սիրելի՛ սյունեցի հավատավոր զավակներ Մեր, այցելել ենք ձեզ հետպատերազմյան դժվարին իրավիճակի, դառը հարվածների եւ նեղությունների դիմագրավման այս ժամանակահատվածում: Եկել ենք ի մոտո հաղորդ լինելու ձեր մտահոգություններին ու խնդիրներին, նաեւ հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունը վերստին բերելու ձեզ:*

...Մենք քաջատեղյակ ենք ազգային-հայրենական մեր կյանքի այս վճռորոշ շրջանում ձեզ պատած դժվարությունների, ձեր առջեւ ծառացած մարտահրավերների մասին: Արցախյան վերջին պատերազմում մեր թանկագին զավակները նահատակվեցին, ունեցանք վիրավորներ, անհայտ կորածներ, գերեվարվածներ, տասնյակ հազարավոր տեղահանված խաղաղ բնակիչներ: Տարածքային կորուստների պատճառով նաեւ Սյունյաց աշխարհի բնակավայրերը սահմանամերձ դարձան Ադրբեջանի հետ՝ դրանից բխող խիստ մտահոգիչ հետեւանքներով: Ադրբեջանը սանձարձակ ոտնձգություններ է կատարում նաեւ Հայաստանի սահմանների նկատմամբ, մասնավորապես՝ Սյունիքի, Գեղարքունիքի գյուղական որոշ համայնքների տարածքների հանդեպ»:

«Սիրելիներ, խռովքի մեջ է ամենքիս հոգին, խռովքի մեջ է համայն հայությունը: Սյունյաց աշխարհի Մեր զավակներիդ ստեղծագործ ու խաղաղ կյանքի բնականոն ընթացքն է խաթարված, ավելին՝ ապահովության ու անվտանգության լրջագույն խնդիրն է հառնած: Սակայն Մենք գիտենք, որ ձեր ոգին անկոտրում է, ձեր հարազատ հողին կապվածությունը, հայրենասիրությունն ու ազգանվիրումը ամուր են ձեր սրտերում ու հոգիներում: Դուք ձեր պապերից ու հայրերից ժառանգել եք քաջություն ու կորով՝ օրհասական համգամանքներում ձեր հայրենի տունն ու օջախը պաշտպանելու, անսասան լինելու հայրենյաց պաշտպանության դիրքերում եւ արիաբար կանգուն մնալու հարազատ հողին: Այս փորձությունը եւս, քաջարի՛ սյունեցիներ, ազգովի կհաղթահարե՛նք՝ միայն թե, մեր հերոս նախնիների ոգեշունչ պատգամի համաձայն, մեր արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք, ամուր պահենք մեր նվիրումը հայրենիքին ու մեր սրբազան արժեքներին: Հաստատուն մնանք հավատի մեջ, անկոտրում՝ նեղությունների ու դժվարությունների առջեւ: Ամուր պահենք միմյանց հանդեպ քրիստոսապատվեր սերն ու հզոր միասնությունը, որի առջեւ նահանջում են փորձությունները, եւ զորանում ու ամրապնդվում է լավատեսության ոգին»,— ասաց Նորին Սրբությունը՝ հավելելով, որ Հայոց Եկեղեցին եւ եկեղեցականները հանապազօրյա իրենց աղոթքով ու ծառայությամբ սյունեցիների կողքին են՝ Աստծո խոսքով զորացնելու, դիմակայելու ներքին ու արտաքին մարտահրավերներին:

Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Սյունիքի մարզային իշխանություններին, համայնքապետերին, որոնք եւ այսօր, ինչպես պատերազմական դժվարին օրերին, համայնքների բնակիչների հետ ամուր կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հայրապետական գնահատանք եւ օրհնություն փոխանցվեց նաեւ Սյունյաց թեմի հոգեւոր սպասավորներին՝ առաջնորդական տեղապահի գլխավորությամբ, հավատավոր մեր ժողովրդի հավատն ու ոգին ամուր պահելու, Աստծո խոսքով հավատավոր իրենց հոտին զորացնելու ու մխիթարելու, սահմանամերձ դարձած բնակավայրերում արիասիրտ ծառայությունը շարունակելու համար:

Վերջում Հայոց Հայրապետը հայցեց, որ բարձրյալ Տերն օգնական ու զորակից լինի ամենքիս՝ մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում ճշմարտությունը ճանաչելի դարձնելու եւ արդարության հասնելու ջանքերն արդյունավորելու: Նորին Սրբությունը նաեւ աղոթեց, որ Աստված խաղաղ ու անվրդով պահի հայրենի մեր երկիրը, եւ Տիրոջ պահապան Սուրբ Աջի առջեւ նահանջեն բոլոր չարիքներն ու փորձանքները մեր կյանքից:

Արարողությունից հետո հայրապետական պատվիրակությունը համայնքապետերի ուղեկցությամբ այցելեց Գորիսի զինվորական պանթեոն, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը ծաղկեպսակներ զետեղեցին անմար կրակի եւ հիշատակի խաչքարի առջեւ, ապա արցախյան երկրորդ պատերազմում զոհված քաջորդիների շիրիմների առջեւ, Նորին Սրբության գլխավորությամբ, հոգեւոր դասն աղոթեց նրանց հոգիների հանգստության համար:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակության հետ այցելեց Շուռնուխի սահմանամերձ համայնք, ուր Հայոց Հայրապետին դիմավորեցին համայնքի ղեկավար Հակոբ Արշակյանը եւ համայնքի բնակիչները:

Փոխանցելով ժողովրդին իր հայրական սերն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը՝ Նորին Սրբությունն իր զորակցությունը բերեց շուռնուխցիներին: Վեհափառը նշեց, որ սյունեցիները ազգային-ազատագրական պայքարում իրենց աննկուն ու անպարտ ոգու շնորհիվ դարերի ընթացքում քաջերի համբավ են վաստակել, եւ մեր օրերում եւս սահմանին սյունյաց քաջերի ինքնակազմակերպված խմբերի դրսեւորած արիությունն ու հայրենի հողը պաշտպանելու հարցում սկզբունքայնությունը եւս այդ ոգու անուրանալի արտահայտությունն են:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահը բնակիչների հետ զրուցեցին տիրող անհանգստությունների ու առկա խնդիրների, կյանքի բնականոն ընթացքի խաթարման եւ վտանգների մասին:

Իր զրույցում Նորին Սրբությունը հավաստիացրեց, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի ջանքեր գործադրել բարձրաձայնելու սահմանամերձ համայնքներում բնակվող մեր ժողովրդի խնդիրները եւ հետամուտ լինելու իրավունքների պաշտպանությանը, ապա հորդորեց նախնյաց օրինակով ամուր եւ աննահանջ մնալ իրենց հավատի եւ հույսի մեջ՝ կառչած հայրենի հողին, իրենց օջախներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց նաեւ շուռնուխցիների տներ, զրուցեց ընտանիքների հետ, ծանոթացավ առկա դժվարություններին:

Նորին Սրբությունը նաեւ իր օրհնություններն ու բարեմաղթանքները բերեց շուռնուխցի նորապսակ մի զույգի, որ տեղեկանալով Հայոց Հայրապետի այցի մասին՝ մասնավոր ցանկություն էր հայտնել արժանանալու հայրապետական օրհնության:

Վերադարձին Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրույց ունեցավ համայնքապետերի հետ, որոնց թվում էր նաեւ Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը:

➥ էջ 3, 4, 5

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Ղազախստանի նորանշանակ դեսպանին

Հունիսի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Բոլատ Իմանբաեւին:

Դեսպանին բարեմաղթելով արդյունավոր առաքելություն Հայաստանում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Մայր Աթոռի եւ Ղազախստանի դեսպանատան միջեւ ձեւավորվել են ջերմ հարաբերություններ եւ արդյունավետ փոխգործակցություն: Նորին Սրբությունն առանձնացրեց միջկրոնական երկխոսության ոլորտում գործակցությունը՝ վերհիշելով Հայոց Եկեղեցու մասնակցությունը Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի աշխատանքներում եւ համագումարի շրջանակներում իր այցը Ղազախստան:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ հետպատերազմյան դժվարին իրավիճակին՝ հույս հայտնելով, որ բարեկամ Ղազախստանը՝ իբրեւ ՀԱՊԿ-ի անդամ երկիր, իր նպաստը կբերի տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանն ուղղված ջանքերին: Նորին Սրբությունը դեսպան Իմանբաեւի ուշադրությունը հրավիրեց Հայաստանի սահմանների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի ոտնձգությունների մտոհոգիչ փաստին, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող արցախյան տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության հանդեպ վայրագ վերաբերմունքին:

Իր հերթին Ղազախստանի նորանշանակ դեսպանը Հայոց Հովվապետին փոխանցեց երկրի նախագահի եւ ղեկավարության բարեմաղթանքները: Դեսպանը ժողովուրդների խաղաղ եւ ներդաշնակ կեցության գործում կարեւոր նկատեց նաեւ միջկրոնական երկխոսությունը: Այս առումով դեսպան Իմանբաեւն իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ Ղազախստանի Հանրապետության նախաձեռնությամբ կազմակերպվող Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի կազմակերպչական աշխատանքներին եւ անցկացմանը Հայոց Եկեղեցու կարեւոր մասնակցության համար:

Խոսելով երկրների միջեւ առավել զարգացող եւ ամրապնդվող քաղաքական եւ տնտեսական համագործակցության մասին՝ Ղազախստանի դեսպանն ընդգծեց, որ իր համար մեծ պատիվ է շարունակել ձեւավորված բարեկամության ավանդույթները: Պրն Իմանբաեւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հավաստիացրեց նաեւ, որ պիտի շարունակի ջանքեր ներդնել Մայր Աթոռի եւ Ղազախստանի միջեւ գործակցությունն առավել խորացնելու ուղղությամբ:

Զրուցակիցներն անդրադարձան նաեւ Ղազախստանի հայ համայնքի կարեւոր դերակատարությանը երկկողմ հարաբերությունների սերտացման գործում:

Նշվեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը

Հունիսի 6-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը:

Բերկրառատ օրվա առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը Պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Ս. Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

Հայր Շահեն, անդրադառնալով տոնի խորհրդին, իր քարոզում մասնավորաբար ասաց. *«Սիրելի՜ հավատացյալներ, այսօր, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու տոնակարգի համաձայն, հիշատակում ենք Կաթողիկե Սուրբ Էջմիածնի օրը: Կարեւոր, հիշարժան ու նվիրական օր է, եւ Եկեղեցին հավատացյալներին ուղղակիորեն հիշեցնում է, որ այստեղ՝ Արարատյան դաշտի այս փոքրիկ, բայց նվիրական կտորում, Տեր Հիսուս իջավ, ցույց տվեց Մայր տաճարի՝ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի կառուցման տեղը եւ դրանով իսկ նվիրագործեց ու հաստատեց այն մեծ գաղափարը, որ մենք այսօր՝ տասնյոթ դար հետո, սովոր ենք անվանել «Էջմիածին»»:*



Անդրադարձ կատարելով օրվա ավետարանական ընթերցվածքին՝ հայր սուրբը նշեց, որ ինչպես հրեաները տաճարի նավակատիքի տոնին կարծում էին, որ տաճարը իրենց ռազմավարական մտքի արդյունքն է՝ անտեսելով նրա Աստծու կողմից իր ժողովրդին պարգեւ լինելու փաստը, այնպես էլ մեր պատմության մեջ շատ մեծ եւ փոքր մարդիկ Կաթողիկե Սուրբ Էջմիածինը համարել են զուտ ճարտարապետության հրաշք, անձեռակերտ հոգեւոր-մշակութային կոթող: Սակայն Կաթողիկե Սուրբ Էջմիածինը հայ ազգի հավիտենական կյանքի խտացումն ու բյուրեղացումն է: Այն ոչ միայն քար է, ոչ միայն գեղեցիկ մտածված ճարտարապետական կոթող է, ոչ միայն տարածք է եւ հոգեւորոկանաց դաս, այլ նախ եւ առաջ մեր հոգեւոր հայրենիքի խտացումն է:

««Ես տալիս եմ նրանց հավիտենական կյանք» (հմմտ. Հովհ. Ժ 28):

Այսօր էլ Քրիստոսի այս խոսքերը Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին հնչում են մեր ականջներում: Սուրբ Էջմիածինը մեր բոլորի հոգեւոր հայրենիքն է, ադամանդյա խտացումն այն բոլոր նվիրական արժեքների, որ մենք ունենք: Հոգեւորականները՝ եպիսկոպոսից մինչեւ սարկավագ, Կաթողիկոսից մինչեւ դպիր, ուխտում են ծառայել Սուրբ Էջմիածնի վեհ գաղափարին: Հավատացյալները՝ Սփյուռքից եւ թե Հայաստանից իրենց կյանքի վեհ նպատակն են համարում գալ եւ աղոթել Սուրբ Էջմիածնի պատերի տակ: Այս բոլորն այսօր մեզ հանձնված հավիտենական կյանքն է»,— հաստատեց հայր Շահեն՝ խոսելով նաեւ Սուրբ Էջմիածնի՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած դերակատարության մասին:

Վերջում հայր սուրբը հորդորեց հավատացյալներին միանալ Սուրբ Էջմիածնի պայծառության, նրա գահակալի եւ հոգեւորականաց դասի անսասանության համար վերառաքվող աղոթքին՝ հայցելով Տիրոջից, որ անշարժ պահի հայոց հավիտենականության խորհրդանիշ Մայր Աթոռը:

Սուրբ Պատարագի ավարտին, վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի հանդիսապետությամբ, կատարվեց Սուրբ Էջմիածնի մաղթանք:

Ներկա հավատացյալ ժողովուրդը եւ եկեղեցականներն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շենացման, անսասանության եւ հայոց կյանքում իր սրբազան առաքելության հարատեւության համար:

Հայաստանյան եպիսկոպոսների հայտարարությունը Հայաստանի ներքաղաքական զարգացումների վերաբերյալ

Հունիսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանի եպիսկոպոսների խորհրդակցություն, որի ընթացքում շոշափվել են մեր հայրենական կյանքի ներկա իրավիճակին առնչված հարցեր: Խորհրդակցության ավարտին ընդունվել է հետեւյալ հայտարարությունը.

«Քննարկելով մեր հայրենիքի ու ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերները՝ խոր մտահոգություն ենք հայտնում Հայաստանի ներքաղաքական կյանքում՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների այս շրջանում արձանագրվող մի շարք դատապարտելի երեւույթների առնչությամբ:

Հունիսի 7-ին մեկնարկած նախընտրական քարոզարշավի առաջին իսկ օրից տեղ գտած ատելության խոսքը, վարկաբեկիչ եւ վիրավորական արտահայտությունները, հայհոյելու, հաշվեհարդարներով ու բռնությամբ սպառնալու վարքագիծը, ցավոք, մեր հասարակությանը կարող են կանգնեցնել այնպիսի կացության առջեւ, որի ահագնացման պարագայում անխուսափելի պիտի դառնան անհանդուրժողության, ատելության եւ թշնամանքի հողի վրա քաղաքացիական բախումները: Արդարացում չունեն եւ դատապարտելի են բոլոր այն քայլերը, որոնք պառակտում եւ բեւեռացնում են պատերազմի ցավերը դեռ չամոքած մեր հասարակությանը: Անառարկելի ճշմարտություն է՝ չար սերմը երբեք չի կարող բարի պտուղ տալ, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն տուն՝ կանգուն մնալ (հմմտ. Մատթ. ԺԲ 25):

Նժարի վրա է դրված հայրենիքի ապագան: Հարկ է հայրենասիրություն, նախանձախնդրություն ու հետեւողականություն դրսեւորել հայրենիքի շուրջ մեր ժողովրդի միասնական տեսլականի ձեւավորման գործում, որպեսզի յուրաքանչյուրը պատիվ համարի խոնարհվելը այդ տեսլականի իրագործման լծի ներքո: Դա է նվազագույն գինը, որ կարող ենք վճարել բոլոր ժամանակների մեր նահատակ զավակների անձնազոհության դիմաց: Այս գիտակցությունը պետք է գերակայի մեր երկրում եւ ուղիներ հարթի առկա խնդիրների հաղթահարման:

Այսու կոչ ենք անում բոլոր քաղաքական ուժերին, այդ թվում՝ հատկապես իշխող կուսակցությանը, զերծ մնալու անպատշաճ խոսվածքից ու պահվածքից: Բազմադարյա հարուստ մշակույթ եւ բարձր արժեքներ կերտած մեր ժողովրդին անհարիր են այդպիսի դրսեւորումները, որոնք նսեմացնում են մեր ազգային նկարագիրն ու վարկը: Մի՛ եղեք չարի սերմնացաններ եւ անընդունելի վարքագծով գայթակղություն մի՛ դարձեք քրիստոնյա մեր ժողովրդի համար:

Աղոթում ենք, որ Տերը Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղության մեջ պահի մեր երկիրը՝ պարգեւելով իմաստություն համայն մեր ժողովրդին՝ սիրո եւ համերաշխության մթնոլորտում արարելու իր վաղվա օրը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցը Սյունիք եւ Արցախի Հանրապետություն

↩ էջ 1

Երեկոյան Հայոց Հովվապետը հանդիպում ունեցավ Սյունյաց թեմի հոգեւոր դասի հետ՝ եկեղեցականներին վերստին բերելով իր հայրական օրհնությունն ու գնահատանքը իրենց նվիրյալ ծառայության համար:

Հանդիպմանը քննարկվեցին հետպատերազմյան շրջանում՝ առկա դժվարին իրավիճակում, Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերը, իրականացվող սոցիալական, հոգեխնամ ծրագրերը:

Նորին Սրբությունը թեմի հոգեւոր սպասավորների ուշադրությունը մասնավորապես հրավիրեց զոհվածների, անհայտ կորածների եւ գերության մեջ գտնվողների ընտանիքներին, վիրավորներին եւ նրանց հոգեւոր խնամքին:

Հունիսի 4-ին, ավարտելով իր այցը Սյունյաց թեմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը եռօրյա այցով մեկնեց Արցախ: Վեհափառ Հայրապետն Արցախ էր տարել Մայր Աթոռում պահվող մեր հավատի հայր սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները՝ որպես օրհնության եւ մխիթարության աղբյուր Արցախի բարեպաշտ ժողովրդի համար:

Ամենայն Հայոց Հայրապետի շքախմբին եւ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորած պատվիրակությանը սահմանի վրա դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը՝ թեմի եկեղեցականների հետ, եւ ռուսաստանյան խաղաղապահ ուժերի հրամանատարի տեղակալ գնդերեց Բորիս քհն. Գրիշինը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն ուղեւորվեց Ստեփանակերտ, այցելեց եղբայրական գերեզմանոց: Հուշարձանի մոտ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն ու կառավարության անդամները: Անմար կրակի առջեւ ծաղկեպսակ զետեղելուց եւ հարգանքի տուրք մատուցելուց հետո Նորին Սրբությունը հոգեւոր դասի հետ աղոթք բարձրացրեց առ Աստված՝ արցախյան երկրորդ պատերազմում զոհված հայ քաջորդիների հոգիների հանգստության համար: Երկրի ղեկավարության ուղեկցությամբ Հայոց Հայրապետն այցելեց նաեւ նահատակ զինվորականների շիրիմներին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՀ վաստակյալ նախագահ Բակո Սահակյանի եւ հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեց Ամարասի վանք, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեցին մոտակա համայնքներից այս առիթով համախմբված հայորդիներ եւ զինծառայողներ:

Ս. Գրիգորիսի եկեղեցում «Հրաշափառի» արարողությունից հետո Գարեգին Բ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոս զավակների հոգիների խաղաղության համար: Միասնական աղոթք բարձրացվեց հայցով, որ ամենողորմ Աստված խաղաղության ու ապահովության մեջ պահպանի Արցախը եւ Իր անսահման ողորմածությունն ու Սուրբ Աջի պահպանությունը տարածյալ պահի արցախահայոց եւ համայն հայ ժողովրդի վրա:

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկա ժողովրդին:

«Սիրելիներ, հայրական սիրո ջերմագին զգացումներով ենք ուղեւորվել դեպի ձեզ՝ առ մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներդ, տագնապալի օրերից հետո գոտեպնդվելու միմյանցով, զորանալու մեր Տիրոջ Խոսքով, Ով խոստանում է՝ ասելով. «Քանի որ պահեցիր Իմ համբերության խոսքը, Ես էլ քեզ պիտի պահեմ քո փորձության ժամին…»: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի այս խոստումը, որ կոչում է մեզ համբերության եւ հավատարմության, պիտի օգնի առաջ ընթանալու եւ հառնած դժվարություններն ու նեղությունները, ցավն ու վիշտը հաղթահարելու: Ծանր փորձությունը, որի միջով անցանք, եւ հիմնախնդիրները, որոնք մեր առջեւ են, չեն կարող մատնել մեզ հուսալքության, այլ ընդհակառակը՝ պիտի առավել համախմբեն ու ամրացնեն մեզ, առավել պիտի իմաստացնեն մեզ՝ դասեր քաղելու սխալներից եւ սթափ գնահատելու իրավիճակները: Փորձության ու նեղության ժամին հատկապես առավել անհրաժեշտ է, որ մենք լինենք համախմբված, հավատարիմ մնանք մեր հայրերի հավատքին, մեր Տեր Հիսուս Քրիստոսին, դարեր շարունակ մեր ժողովրդի արյուն-քրտինքով սրբացած մեր հայրենիքին՝ անխախտ հավատով, որ Տերը մեզ հետ է նաեւ մեր փորձության ժամին եւ պարգեւում է մեզ վեր հառնելու զորությունը:

Դուք, Արցախի՛ քաջազուն զավակներ, այսօր արի հոգով ու հաստատակամ կանգնած եք մնում հայրենի հողին, որի յուրաքանչյուր թիզը վկան է մեր պատմության, քրիստոնեական մեր ինքնության, մեր ստեղծարար կյանքի եւ խաղաղության ու արդարության մեր ազնիվ ձգտումների: Արցախը, որ նվիրական մասն է մեր բնօրրան հայրենիքի, բնօրրան է նաեւ քրիստոնեության»,— ասաց Հայոց Հովվապետը՝ նշելով, որ Արցախում են քառոզել սուրբ Թադեոս առաքյալի Դադի եւ Եղիշա աշակերտները, Արցախում է քրիստոնեության լույսը տարածել եւ ծաղկուն տարիքում նահատակվել սուրբ Գրիգոր Լուսավորչի թոռը՝ սուրբ Գրիգորիս Հայրապետը, Արցախում է սուրբ Մեսրոպ Մաշտոցը բացել առաջին դպրոցներից մեկը, Արցախում են հազարավոր մեր սուրբ նահատակների մասունքները եւ նրանց վրա բարձրացած վանքերն ու եկեղեցիները:

«Այսօր սրբազան այս հողի վրա ձեր ներկայությունը, սիրելիներ, դժվարությունները հաղթահարելու ձեր հանձնառությունն ու նախանձախնդրությունը ոգեշնչում են համայն մեր ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում: Արցախը, այո՛, շարունակում է մնալ մեր ժողովրդի հավատքի ու հայրենասիրության խորհրդանիշը եւ շարունակում է միավորել մեր ժողովրդին ազգային իղձերի շուրջ: Աննվազ է մեր ժողովրդի պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցությունն Արցախին եւ ջանքեր ներդնելու՝ ի խնդիր այստեղ ապրող Մեր զավակներիդ իրավունքների պաշտպանության»,— ընդգծեց Հայրապետը՝ կարեւորելով ազգի ուժերի համախմբումը՝ Արցախում ծանր պատերազմի հետեւանքով ավերակված տների, դպրոցների, հիվանդանոցների վերականգնման, սրբատեղիների պահպանության գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց արցախցիներին եւ համայն հայ ժողովրդին՝ Աստծուն ապավինած, հույսով ու լավատեսությամբ յուրաքանչյուրն իր տեղում, յուրաքանչյուրն իր չափով նպաստել Արցախի, մեր ժողովրդի կյանքի վերազարթոնքին եւ իր հայրենի հողի վրա ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքների պաշտպանությանը: Նորին Սրբությունը նշեց, որ միասնաբար տոկալով ու համբերելով նեղություններին, հանձն առնելով զոհողություններ՝ անվերապահ նվիրումով եւ հանձնառություններով պիտի արժանի լինենք մեր խիզախ զավակներին, որոնք իրենց կյանքը նվիրեցին հայրենիքին՝ պաշտպանելով Արցախ եւ Հայաստան մեր աշխարհը: ➥ էջ 4, 5

Արխիվային վավերագրերի ու նյութերի ցուցահանդեսի բացում եւ «Խորհրդային Հայաստան 100. Եկեղեցին եւ պետությունը» խորագրով գիտաժողով Մայր Աթոռում

Հունիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նախաձեռնությամբ Մայր Աթոռի արխիվի եւ աջակցությամբ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի, տեղի ունեցավ արխիվային վավերագրերի ու նյութերի ցուցահանդեսի բացում եւ «Խորհրդային Հայաստան 100. Եկեղեցին եւ պետությունը» խորագրով գիտաժողով:

Ցուցահանդեսին ներկայացված էին գիտաժողովի թեմային առնչվող արխիվային վավերագրեր, նյութեր, գրքեր, ինչպես նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի կտավներից մեկը՝ որպես Խորհրդային Հայաստանի գեղարվեստի տիպական ստեղծագործություն:

Գիտաժողովն սկսվեց Տերունական աղոթքով եւ Մայր Աթոռի արխիվի եւ թանգարանների տնօրեն Ասողիկ աբդ. Կարապետյանի բացման խոսքով: Ներկաներին ողջունեցին նաեւ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար դոկտոր Թոմաս Շրափելն ու Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Գիտաժողովի առաջին մասում, որ կրում էր «Խորհրդայնացումից ազգային պետություն» վերնագիրը, բանախոսություններով հանդես եկան պ. գ. թ.Ավագ Հարությունյանը («Կրոնական քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում 1920—1930-ական թվականներին»), պ. գ. դ. Ամատունի Վիրաբյանը («Խորհրդային Հայաստանի ղեկավարները եւ նրանց վերաբերմունքը Եկեղեցու նկատմամբ 1920—1930-ական թվականներին»), պ. գ. թ. Գոհար Ավագյանը («ՀԽՍՀ-ում Եկեղեցու եւ այլ կառույցների գործունեությունն ի նպաստ Հայրենիք—Սփյուռք կապերի հաստատման (1921—1945 թթ.)») եւ Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Արարատ քհն. Պողոսյանը («Խորհրդային Միությունում հայկական եկեղեցիների վերաբացման հարցը 1945—1960 թթ.»):

Գիտաժողովի «Ազգային զարթոնքից անկախություն» վերնագիրն ունեցող երկրորդ հատվածում զեկույցներ ներկայացրեցին ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը («Ազգային վերածնունդը եւ Հայ Եկեղեցին 1960-ական թթ.»), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը («Խորհրդային Հայաստանի արվեստը եւ մշակույթը»), Հայ ազգային կոնգրեսի փոխնախագահ Արամ Մանուկյանը («1920 թ. պատմական կոմպրոմիսը») եւ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության տնօրեն, պ. գ. թ. Արամ Անանյանը («Պատմության վերաիմաստավորումը. Խորհրդային Հայաստանի պատմության ուսումնասիրությունը ներկայի համապատկերում»):

Զեկուցումների ավարտին ներկայացված նյութերի շուրջ տեղի ունեցան քննարկումներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական

↩ էջ 1, 3

Վեհափառ Հայրապետը Աստծո շնորհները, օրհնությունն ու պահպանությունը մաղթեց արցախցիներին՝ Ամարասի նվիրական սրբավայրում հայցելով բարեխոսությունը սուրբ Գրիգորիս Հայրապետի եւ աղոթելով, որ Աստված երկնային բարձունքներում խաղաղության մեջ հանգչեցնի հոգիները հայրենիքի պաշտպանության մարտերում զոհված հայորդիների, ապաքինություն պարգեւի վիրավորներին, շուտափույթ դարձ՝ գերիներին եւ անհայտ կորածներին, մխիթարություն՝ հարազատներ կորցրած ընտանիքներին:

Նորին Սրբությունը հայցեց, որ Աստված օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ հանուն հայրենիքի եւ հանուն ազգային մեր իղձերի իրագործման:

Իր օրհնությունը ժողովրդին բաշխելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոնարհումը բերեց ս. Գրիգորիս Հայրապետի շիրիմին, ապա ծանոթացավ Ամարասի վանքի հիմնանորոգման աշխատանքներին:

Այնուհետեւ հայրապետական պատվիրակությունն ուղղվեց դեպի Մաճկալաշեն համայնք, ուր Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ համայնքի զոհված հայորդիների ընտանիքների հետ՝ բերելով իր մխիթարությունն ու օրհնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Արցախի Հանրապետություն հայրապետական այցի երկրորդ օրն սկսվեց Արցախի պաշտպանության բանակի N զորամաս այցելությամբ:

ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանի եւ հոգեւորականաց պատվիրակության ուղեկցությամբ ժամանելով զորամաս՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու հայրական բարեմաղթանքները բերեց հրամանատարական, սպայական կազմերին եւ այս առիթով հավաքված զինվորներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոնարհումը բերեց հանուն Արցախի անկախության եւ Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության պայքարած քաջարի զինվորականներին եւ իրենց կյանքն ի սեր հայրենյաց զոհաբերած հերոսների հիշատակի առջեւ՝ ընդգծելով, որ վճարված այդ թանկ գինը երբեք չպիտի մոռացվի, այլ պետք է դառնա մի նոր ուխտ Արցախի անկախ պետականության պաշտպանության եւ զորացման:

«Դժվարին ժամանակներ է ապրում համայն հայությունը: Արցախի դեմ Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական խմբավորումների օժանդակությամբ սանձազերծված Ադրբեջանի 44-օրյա պատերազմն իր հետեւանքներով, պատճառված վնասներով ու ահռելի կորուստներով դեռ երկար ժամանակ ցավի ու տրտմության մեջ պիտի պահի մեզ, քանի դեռ չենք կարողացել գործում միջոցներով հաղթահարել առկա ծանր իրավիճակը եւ փարատել ապագայի հանդեպ անորոշության զգացումը: Առկա խնդիրներն ու մարտահրավերները մեր կյանքի իրենց լուծումները պիտի ստանան, երբ անխտիր ամենքս հետեւություններ կատարենք ողբերգական այս կացության պատճառների վերաբերյալ»,– ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը նշեց, որ հաղորդ է հայ զինվորականների քաջությանն ու հերոսական սխրանքներին, անձնուրաց պայքարի փառավոր դրվագներին՝ ընդգծելով, որ Ավարայրից մինչեւ Սարդարապատ եւ Արցախ՝ բոլոր ժամանակներում դրսեւորվել է այն հաստատ համոզումն ու գիտակցությունը, որ հայ զորականի թիկունքում ամենաթանկերն են՝ հայրենի հողը, հայի ինքնությունը պայմանավորող սրբությունները եւ ընտանիքը:

«Այս հերոսագործ ոգին սրբացրեց մեր ժողովուրդը՝ հետագա սերունդներին փոխանցելով հայրենյաց պաշտպան մարտիկների փառապանծ անուններ:

Սիրելի՛ զավակներ մեր, պանծալի այդ անձինք իրենց ժամանակի մեջ առավել չէին, քան դուք այսօր: Ձեզ պես պարզ երիտասարդներ եւ այրեր էին՝ հայրենասեր եւ ազգանվեր նույն խառնվածքով ու ձգտումներով, կյանքի նկատմամբ լցված նույն հույսերով եւ լուսավորին ու պայծառին հասնելու ջինջ ցանկությամբ: Առավել չէին նաեւ նրանց մաքառումի ոգին եւ նախանձախնդրությունը, քան արցախյան հողի վրա ձեր եղբայրների ու հայրերի անձնդիր հանձնառությունը:

Սակայն, առաքյալի խոսքի համաձայն, նրանք իրենց բարի պատերազմը պատերազմեցին, եւ այսօր նախնյաց կողմից մեր սերնդին է փոխանցված սրբազան պարտքը՝ վառ պահելու մեր ինքնության կերոնը, նաեւ հաստատակամորեն կանգնելու հայրենիքի պաշտպանության առաջնագծում, որքան էլ որ դժվարին եւ ծանր լինի այդ առաքելությունը: Հայոց բանակը եւ հայ զինվորն է այսօր միակ երաշխավորը հայրենի պետականության, մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի, ձեր ընտանիքների ու սիրելիների անվտանգության ու երջանկության, ամեն ազգայինի հարատեւության»,– իր խոսքում ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ եկեղեցին մշտապես զորավիգ է եղել եւ այսուհետ եւս պիտի լինի Հայոց բանակի՝ հավելելով, որ անգամ պատերազմի ամենածանր պահերին եկեղեցականները եւ գնդերեցները հայ զինվորի կողքին են եղել, իսկ աշխարհասփյուռ համայքները զորակցել եւ առկա կարիքներում օգնություն հասցրել:

«Սիրելի՛ զինվորներ եւ սպաներ, Հայոց բանակի ոգին եւ հաղթական կամքն է աղբյուրն ազգի զորության եւ վստահության, մեր ժողովրդի ոգեշնչման եւ գալիք օրվա նկատմամբ լավատեսության: Ամուր եւ անսասան մնացեք այս կոչման մեջ, եւ Փրկիչ մեր Տերը, հավատում ենք, պիտի պարգեւի մեզ նորանոր հաղթություններ»,– պատգամեց Գարեգին Բ Հայրապետը՝ հայցելով Աստծուց պահել եւ պահպանել զինվորականներին ապահով եւ անփորձանք, որպեսզի իրենց աներեր ու զորավոր բազկով պաշտպանը լինեն հայրենի երկրի, մեր սրբությունների եւ կատարելով իրենց սրբազան պարտքը՝ վերադառնան իրենց ընտանիքներ՝ շարունակելու իրենց նվիրական կյանքն ու գործը հայրենական անդաստանում:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց ՊԲ հրամանատարներին եւ ներկա ողջ զինվորականությանը:

Հունիսի 5-ին՝ այցի 3-րդ օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի եւ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հետ, ուղեկցությամբ հոգեւոր դասի, այցելեց Գանձասարի վանք:

Վանքի առջեւ Հայոց Հովվապետին դիմավորեցին վանահայր Սահակ վրդ. Շաքարյանը, զինվորականներ եւ հարակից համայնքների բնակիչներ:

«Հրաշափառի» արարողությամբ եկեղեցականաց թափորը Նորին Սրբությանն առաջնորդեց Ս. Հովհաննես Մկրտչի մասունքներն ամփոփող պատմական տաճար, ուր, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Հովհաննես Մկրտչի բարեխոսության հայցով ներկա բարեպաշտ ժողովուրդը Հայոց Հայրապետի հետ միասին աղոթեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների խաղաղության եւ արցախահայության ու համայն մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ ու համերաշխ կյանքի համար:

Արարողության ավարտին Վեհափառն իր պատգամը բերեց ներկաներին՝ ամենքին փոխանցելով օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ողջույններն ու բարի մաղթանքները աշխարհասփյուռ մեր ժողովրդի:

«Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մարդկության փրկության համար մատնվեց չարչարանքների, նեղությունների ու մահվան: Արցախյան գոյամարտերում մեր զավակները քրիստոսանմանությամբ նահատակվեցին՝ վասն հայրենյաց ընծայաբերելով իրենց կյանքը: Մենք անցանք պատերազմի բովով, նեղությունների միջով: Բայց Փրկիչ մեր Տերը մեզ պարգեւել է հարության շնորհը, որով պատմության բոլոր արհավիրքներից հառնել է մեր ժողովուրդը եւ վերընծայուղել իր նոր կյանքը: Մենք հավատում ենք, որ Տերը փորձությունների մեջ մեզ հետ է, եւ չարի հարվածները չեն կարողանալու խորտակել մեր հույսն ու կամքը, ապրելու ու հարատեւելու մեր զորությունը, մեր պետականությունը՝ կերտված մեր ժողովրդի զավակների կյանքի թանկ գնով:

Սիրելի՛ արցախցի զավակներ Մեր, քաջալեր ենք ձեզանով, որ հակառակ ամեն դժվարության ու նեղության՝ ամուր կանգնած եք հարազատ հողին եւ անսասան հավատով ու հույսով կերտում եք ձեր նոր կյանքը: Պողոս առաքյալն ասում է, որ տկարության մեջ ավելանում է երկնային շնորհը հարվածներին դիմակայելու, փորձությունները հաղթահարելու (հմմտ. Բ. Կորնթ. 12.9, 10): Այս փորձությունը եւս, հավատում ենք, հաղթահարելու ենք համազգային միասնականությամբ ու համատեղ ջանքերով: Անարդարությունները, մեր ազգի դեմ ցեղասպան նոր գործողությունները, մեր սրբությունների, վանքերի ու եկեղեցիների հանդեպ ոտնձգություններն ու ավերումները մենք աներեր կամքով ու միաբանությամբ պիտի վերածենք ազգային վերազարթոնքի ու հզորության՝ ապահովելով Արցախի անկասելի առաջընթացը»,– ասաց Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց նաեւ Հայոց Եկեղեցու կողմից Արցախին ու ժողովրդին ցուցաբերվող մշտական զորակցության, վերջին պատերազմի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ տարբեր թեմերից հոգեւորականների եւ գնդերեցների կարեւոր առաքելության մասին՝ նշելով նաեւ, որ այսօր դժվարին պայմաններում Արցախի թեմը շարունակում է իր հոգեւոր խնամքը՝ ծանր ժամանակներ ու մարտահրավերներ դիմագրավող արցախահայությանը:

Խոսքն ուղղելով Արցախի հավատավոր ժողովրդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց տոկուն մնալ, ամուր պահել հավատքը, կապված լինել հողին ու ջրին՝ նոր կյանք բխեցնելու հայրենի երկրում, այն շենացնելու եւ իրենց գործերով հզոր ու բարոր դարձնելու:

այցը Սյունիք եւ Արցախի Հանրապետություն

«Ամուր պահեցեք ձեզանում գիտակցությունն ու հիշողությունը, որ առ Աստված ապավինությամբ մենք հառնել ենք մեր պատմության գողգոթաներից եւ այս պատերազմի պատուհասներից էլ պիտի վեր բարձրանանք դեպի մեր կյանքի լուսավոր նոր հորիզոնները: Այս է պատգամը մեր նահատակ հերոսների, որոնք իրենց կյանքը տվեցին՝ ի սեր հայրենիքի ու ազգի»,– շեշտեց Նորին Սրբությունը՝ աղոթելով, որ բարձրյալ Տերն Իր օրհնությունն ու Սուրբ Աջի պահպանությունը միշտ հովանի դարձնի ազգային ու հայրենական մեր կյանքին եւ պարգեւի հոգու ամրություն

ու զորություն՝ դիմակայելու մեր առջեւ հառնած մարտահրավերներին:

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստծո խնամքի մեջ արգասավորվի ազգային միաբանությունը հայրենիքում ու սփյուռքում՝ միասնական ջանքեր բերելու մեր կյանքի նորոգման, մեր իրավունքների պաշտպանության առաքելության մեջ:

Վերջում Գանձասարի վանքի բակում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց այս առիթով վանք այցելած բոլոր հայորդիներին:

Հունիսի 6-ին՝ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Ստեփանակերտի



Ս. Աստվածածին առաջնորդանիստ տաճարում մատուցվեց Պատարագ: Այս առիթով հավատացյալների՝ խոնարհումի եւ օրհնության համար եկեղեցում դրվել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերված սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքները, որպեսզի զորանան հավատքով ու լավատեսությամբ իրենց նոր կյանքը կերտելու ճանապարհին:

Տաճարի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեց եկեղեցականների թափորը: «Հրաշափառի» երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը, օրհնելով ներկա բարեպաշտ ժողովրդին, առաջնորդվեց դեպի խորան, ուր երկրպագությունից հետո սկսվեց Պատարագի սրբազան արարողությունը:

Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը: Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էր պետական ավագանին՝ գլխավորությամբ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի, Արցախի վաստակյալ նախագահներ Արկադի Ղուկասյանը եւ Բակո Սահակյանը, ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանի պատվիրակությունը, թեմի եկեղեցականներ, զինծառայողներ եւ հավատավոր բազում արցախցիներ:

Պատարագի արարողության ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանքի արարողություն՝ Արցախի խաղաղության եւ անվտանգության, ժողովրդի ապահով եւ բարօր կյանքի համար: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցն Արցախ ողջունեց թեմական առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը՝ ընդգծելով, որ պատմական օրեր է ապրում Արցախը, քանզի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արարատյան շաբաթն ու Սուրբ Էջմիածնի տոնն անցկացնում է Սյունիքի եւ Արցախի իր զավակների հետ: Սրբազանը նկատեց, որ առկա դժվարին պայմաններում Հայոց Հայրապետի այցը մեծ մխիթարություն եւ քաջալերանք է արցախցիների համար: Սրբազանի ողջույնի խոսքից հետո ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Վեհափառը: *«Տիրոջ ողորմածությամբ համախմբվել ենք Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ մեր միասնական աղոթքը վերառաքելու առ Աստված, որ Տերը մեզ ուժ ու զորություն տա՝ հաղթահարելու պատերազմի արհավիրքները, վեր ելնելու վշտերի ու տառապանքների ծանր շրջանից եւ վիրավոր մեր կյանքը նորոգելու տերունական օգնությամբ: Համախմբվել ենք աղոթելու Հայաստան եւ Արցախ մեր աշխարհի խաղաղ ու ապահով կյանքի, հայրենի մեր պետությանց զորացման ու բարօրության համար, ռազմի դաշտում անմահացած մեր հերոսների, խաղաղ բնակչության շրջանում մեր ունեցած զոհերի, պատերազմի ընթացքում վիրավորվածների, անհայտ կորածների, գերեվարված մեր զավակների համար»,–* նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառն անդրադարձավ նաեւ օրվա խորհրդին՝ Սուրբ Էջմիածնի տոնին, Աստծո Միածին Որդու էջքով Մայր տաճարի հիմնմանը՝ ընդգծելով. *«Այս լուսեղեն իրողությունը վկայությունն է մեր ազգին տրված հարության շնորհի, Տիրոջ օգնությամբ մեզ պատուհասած փորձությունների հաղթահարման: Դարերի մեջ մենք շատ ծանր ու դաժան ժամանակներ ենք ապրել, ավեր ու կոտորած, ցեղասպանություն տեսել, բայց միշտ առ Աստված ապավինությամբ հառնել ենք բարօր ապագա կերտելու ամուր կամքով եւ հույսով: Այսօր էլ մենք նույն հավատն ունենք, որ խաչյալ եւ հարուցյալ մեր Փրկչի շնորհով պիտի զորանանք եւ հաղթահարենք պատերազմի ծանր հարվածները՝ վեր ելնելով մեզ պատած նեղություններից դեպի մեր կյանքի նոր արեւաշող հորիզոններ»:*

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ Արցախին պատուհասած դժվարություններին եւ վերազարթոնքի անհրաժեշտությանը: *«Սիրելիներ, Արցախը հայրենի մեր բնօրրանի սրբազան մասն է, քրիստոնյա մեր ժողովրդի հարստությունը՝ իր պատմությամբ ու սրբություններով: Արցախի սիրով եք դուք ամուր եւ կանգուն ձեր հարազատ հողին, այդ ոգով եք վճռական՝ այստեղ ձեր կյանքը շարունակելու եւ նոր իրագործումներով բարեզարդելու: Դուք հիանալի օրինակ եք տվել այս նվիրական երկրում արիասիրտ սխրանքների ու աստվածահաճո արարումների: Դուք խիզախորեն պաշտպանել եք ձեր երկիր հայրենին, նորոգել ու պայծառացրել եք ձեր քաղաքներն ու շեները, ձեր այգեստանները, ձեր սրբավայրերը, նոր աղոթավայրեր կառուցել, որի լուսաշող վկայություններից մեկն է Սուրբ Աստվածածին հոյակերտ այս եկեղեցին: Մեր նախնյաց փորձառությունը եւ ոգին հավաստում են, որ մեզ պատուհասած ավերներն ու պատերազմի արհավիրքները եւ ոչ մի նեղություն չեն կարողանալու մեզ ընկճել եւ սասանել հայրենիքում անկախ ապրելու մեր հաստատակամությունը: Հայի ոգին չի ընկրկում դժվարությունների առջեւ, չի կոտրվում ցավից ու վշտից: Մենք ահասարսուռ պատուհասների հաղթահարումի ու մեր ազգի հարության փորձառությունն ունենք, որը մեզ ուժ է տալու այս նոր ժամանակներում եւս ելնել նոր արարումների, հավատալ մեր ապագային, հավատալ մեր հայրենիքի ու կյանքի զարթոնքին:*

Սիրելինե՛ր, վեր հառնելու ճանապարհին, պահելով հավատն առ Աստված եւ սերն առ հայրենին, մենք առավել պիտի զորանանք, առավել պիտի զորանա մեր կամքն ապրելու եւ արարելու նոր եռանդով ու ձեռքբերումներով: Մեր վերելքներով ու հաջողություններով է նաեւ, որ արժեւորելու ենք մեր նահատակների անձնազոհության ու հայրենանվիրումի մեծագույն սխրանքը: Պատերազմի ընթացքում մենք կորցրեցինք հարազատ երկրի զգալի մասը: Սակայն գիտենք՝ ձեր ոգին աննկուն է, եւ հույսը անջնջելի, որ հակառակ ամեն խոչընդոտի վերականգնելու եւ շենացնելու եք Արցախը: Արցախը մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ ազատ ու անկախ ապրելու վճռականության խորհրդանիշն է: Մեր պատմական հայրենիքի այն նշխարը, որի վրա շարունակում ենք ապրել, պիտի հզորացնենք եւ դարձնենք անվտանգ ու բարգավաճող, ամուր պետականությամբ, համազգային միաբանությամբ, համընդհանուր ջանքերով»,– ասաց Նորին Սրբությունը՝ պատգամելով հույսով ամուր մնալ, հավատով՝ անսասան, աննկուն լինել նեղությունների հանդիման: Վեհափառը հորդորեց չվհատվել ընդդեմ դժվարությունների, այլ միաբան լինել մարտահրավերների դիմագրավման եւ միասնական՝ փորձությունների հաղթահարման մեջ: *«Այս ծանր փորձությունից պետք է հետեւություն անենք՝ սխալներ թույլ չտալու, մեր ազգային միաբանությունը չտկարացնելու, գործելու ազգի ու հայրենիքի գերագույն շահով, մեծագույն պատասխանատվությամբ»,–* ընդգծեց Հայոց Հովվապետը՝ հայրական իր սերն ու օրհնությունները բերելով ամենքին եւ վստահեցնելով, որ համայն հայ ժողովուրդը, Սուրբ Եկեղեցին՝ իր թեմերով ու կառույցներով, արցախցիների հետ է՝ Արցախի խաղաղ ու ազատ կյանքը հաստատելու եւ կորուստները վերականգնելու իրենց ջանքերում:

Հայոց Հայրապետը հայցեց Տիրոջ զորակցությունն ու օգնականությունը Արցախի ժողովրդին եւ պետական այրերին պատերազմի հետեւանքների հաղթահարման, Արցախի կյանքի բնականոն ընթացքը վերահաստատելու կարեւոր գործում: Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց Պաշտպանության բանակի սպաներին ու զինվորներին, որ անձնվիրումով կանգնած են հայրենյաց պաշտպանության դիրքերում՝ ընդգծելով նաեւ, որ Արցախի յուրաքանչյուր զավակ հայրենյաց մարտիկ է եւ Արցախում իր կեցությամբ է պահում հայրենի երկիրը: Հայրապետն իր բարձր գնահատանքը բերեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ ազգային-եկեղեցական անդաստանում շարունակական նպաստ բերող եւ պատերազմական դժվարին պայմաններում էլ Արցախին աջակցած բարերար բոլոր զավակներին, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Արցախի թեմի երկարամյա առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանին, Արցախի թեմի ներկայիս առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանին եւ հոգեւոր դասին՝ Արցախի թեմը շենացնելու, հայորդյաց հավատքն ամրապնդելու, նաեւ պատերազմական ծանր շրջանում հավատավոր իրենց զավակների հետ լինելու, նրանց քաջալերելու եւ մխիթարելու գովարժան ծառայության համար:



Արցախի սրտից Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքն ու շնորհակալությունն ուղղեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ խաղաղության հաստատման ջանքերի համար, որով կանխվեցին մարդկային նոր կորուստները եւ հայկական բնակավայրերի ավերումները՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմում: Նորին Սրբությունը նաեւ իր եղբայրական սերն ու շնորհակալությունը հայտնեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ խաղաղության հաստատման, ի մասնավորի Դադիվանքի հոգեւոր կյանքի անխաթարությունը երաշխավորելու ջանքերի համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով անդրադարձավ նաեւ Արցախում ռուս խաղաղապահների՝ անվտանգության ու իրավիճակի կայունության ապահովման գործում կարեւոր առաքելությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց արցախյան պատերազմում զոհված զինվորների համար՝ վերստին մխիթարություն հայցելով Տիրոջից զոհվածների հարազատներին, ամենքի սրտերին ու հոգիներին եւ շուտափույթ վերադարձ մաղթելով գերիներին եւ անհայտ կորածներին:

Իր պատգամի վերջում Նորին Վեհափառությունը, սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքներով օրհնելով Արցախի հավատավոր ժողովրդին, հայցեց, որ Փրկիչ Տերն ամենազոր Իր Խաչի հովանու ներքո անսասան խաղաղության մեջ պահի Արցախի Հանրապետությունը, եւ Աստծո ողորմությամբ զորանա արցախահայությունը՝ կերտելով ստեղծագործ ու զարգացող կյանքի նորանոր հաջողություններ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Դոկտոր Գեւորգ Աբգարյանը եւ նրա հայրենավեր գերդաստանը

Սկիզբը՝ թիվ 9–10

Ստալինի մահից եւ Բերիայի գնդակահարումից հետո Գեւորգ Աբգարյանը 1955 թվի մարտի 19-ին ժամկետից շուտ ազատվեց կալանքից, եւ տարիների փորձությամբ թրծված հավատարմությունը պսակվեց երջանիկ զույգի ամուսնությամբ, որից ծնվեցին Արմենուհին (1955 թ.), Անահիտը (1957 թ.) եւ Վահագնը (1958 թ.): Սակայն Ալինան, դեռեւս երիտասարդ, անակնկալ հիվանդացավ եւ, դժբախտաբար, 1963 թվին՝ 40 տարեկան հասակում, կնքեց մահկանացուն՝ թողնելով փոքրահասակ երեխաներին: Ճակատագրի այս նոր հարվածը Գեւորգ Աբգարյանը ստիպված էր մի քանի տարի միայնակ հաղթահարել, մինչեւ որ 1968 թվին ամուսնացավ իր ուսանողական ընկերուհի Էմմա Գասպարյանի հետ, որը նրա հետ կիսեց երեխաների խնամքի, դաստիարակության եւ կրթության հոգսը:

Նրա գիտական գործունեությունը սկսվեց գիտական հայտնագործությամբ: 1946 թվին ԵՊՀ-ում Գ. Աբգարյանը իր ավարտական դիպլոմային աշխատանքում ցույց տվեց, որ Մաղաքիա Աբեղային կամ Վարդան Արեւելցուն վերագրվող «Պատմություն վասն ազգին նետողաց» ձեռագիր մատյանը իրականում պատկանում է XIII դարի պատմիչ Գրիգոր Ակներցուն, եւ վերջինիս անվամբ էլ մոնղոլական արշավանքներին վերաբերող այդ երկը թարգմանվել է անգլերեն, թուրքերեն եւ վրացերեն:

Այս ընթացքում ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով կառուցվեց Մատենադարանի հոյակապ շենքը՝ Մաշտոցի պողոտայի հյուսիսային ծայրում՝ դեպի Երեւան նայող բլրի վրա: Մատենադարանը նորակառույց շենք է փոխադրվել 1959 թվին, իսկ 1962-ին կոչվել է Մեսրոպ Մաշտոցի անվան: 1954–1982 թթ. Մատենադարանի հիմնադիր տնօրենն է եղել ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանը, որի ջանքերով հաստատությունը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց միջազգային ճանաչում: Նրա հանձնարարությամբ նորակառույց Մատենադարանի շենքի եւ ձեռագիր գանձերի մասին «Մատենադարան» գիրքը՝ 126 էջ ծավալով, 1962 թ. գրեց Գեւորգ Աբգարյանը՝ բազմալեզու ընթերցողների համար՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, իսկ լեհերեն՝ 1965 թ.:

1954 թվին Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի գիտությունների ակադեմիաների իսկական անդամ, Քեմբրիջի (Անգլիա) համալսարանի պրոֆեսոր Վ. Ֆ. Մինորսկին (*Վլադիմիր Ֆյոդորովիչ Մինորսկի (1877–1966) – ռուս արեւելագետ եւ դիվանագետ, պատմաբան եւ աշխարհագրագետ, Պարսկաստանի եւ Անդրկովկասի գրականության եւ մշակույթի մասնագետ: Մեծ ներդրում ունի մոնղոլական, թյուրքական, կովկասյան, հայկական եւ բյուզանդական պատմական հետազոտություններում, Բրիտանական եւ Ֆրանսիական ակադեմիաների իսկական անդամ*) Հայաստանի գիտնականների ուշադրությանը ներկայացրեց Յոզեֆ Մարկվարտի «Die Provinz Parskahajk» գերմաներեն աշխատության հեղինակային ձեռագիրը (*Երբ Խորհրդային Միության ղեկավարությունը հարց էր բարձրացրել ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի առաջ՝ վերադարձնելու հայ ժողովրդից խլված պատմական հողերը, Վ. Ֆ. Մինորսկին 1946 թվին հանդես եկավ քաղաքական հայտարարությամբ, որում դատապարտում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էռնեստ Բեւինին՝ Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուի հայտարարությունը պաշտպանելու համար՝ իբր Կարսի եւ Արդահանի տարածաշրջանում հայեր գոյություն չեն ունեցել: Հիշեցնելով Հիտլերի խոսքերը, թե՝ «ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածի մասին», Մինորսկին մատնանշում էր, թե մարդկության հիշողությունը այնքան էլ կարճ չէ, եւ նա հիշում է, թե ինչպես վարվեցին երիտթուրքերը հայերի հետ*): Այդ հետազոտությամբ Մարկվարտը նպատակ էր դրել վերականգնել Պարսկահայքի տեղագրությունը եւ նրա գրված տարածքը ճշգրտելու համար օգտագործել էր բազմաթիվ սկզբնաղբյուրներ հին եւ նոր լեզուներով (հայերեն, հունարեն, արաբերեն, լատիներեն, ասորերեն, պարսկերեն, պահլավերեն, հին եբրայերեն եւ այլն), ինչպես եւ հայ, գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի եւ այլ հեղինակների ավելի քան 100 հետազոտություն: Արդյունքում Մարկվարտը բացահայտեց բազմաթիվ նոր տվյալներ հայ ժողովրդի պատմության, մատենագրության եւ ընդհանուր բանասիրության բնագավառում: Հատկապես արժեքավոր են Մարկվարտի կատարած ճշգրտումները եւ ուղղումները հույն աշխարհագրագետներ Ստրաբոնի, Պտղոմեոսի եւ Պլինիոսի, արաբ պատմիչներ Ալ Իստախրիի, Ալ Բալխիի բնագրերում, ինչպես նաեւ Պարսկահայքի հետ կապված տեղագրական նշումների համեմատումը Պեւտինգերյան քարտեզի եւ այլ ուղեգրական ձեռնարկների եւ աղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ: Այս ամենը նոր լույս է սփռում Հին աշխարհի եւ Արեւելքի ժողովուրդների պատմության, աշխարհագրության, մատենագրության, բանահյուսության, լեզուների եւ մի շարք սակավ հայտնի խնդիրների վրա:



1960–61 թվերին, հետեւելով Մինորսկու ուշագրավ առաջարկին, Գ. Աբգարյանն առաջինը ձեռնարկեց Մարկվարտի եզակի ուսումնասիրության հետազոտումը՝ նվիրված Մեծ Հայքի Աշխարհացույցի 7-րդ նահանգ Պարսկահայքին (*Գ. Աբգարյան. Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը (Առաջաբան), ՊԲՀ, 1961, №1, էջ 180–184. Յ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, ՊԲՀ, 1961, №1, էջ 185–207, №2, էջ 212–244 – գերմաներեն անտիպ բնագիրը թարգմանեց, ծանոթագրեց եւ պատրաստեց հրատարակության Գ. Վ. Աբգարյան*): Նախկին ռազմագերու ձախավեր ճակատագիրն ուղեկցել է նույնիսկ անվանի գիտնական Գեւորգ Աբգարյանին: Իր կենսագրության վերը բերված հանգամանքների հետեւանքով հնարավորություն չունենալով անձամբ թղթատել Մարկվարտի գիտական արխիվը, որ պահվում է Իտալիայում՝ Հռոմի «Pontificio instituto Biblico (այսինքն՝ պապական)» գրադարանում, Գ. Աբգարյանը ստիպված էր այդ անտիպ ժառանգությունը ուսումնասիրել Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Հռոմից ստացված ոչ կատարյալ լուսապատճենների միջոցով՝ այն ժամանակվա խոշորացնող պարզագույն հարմարանքով, որն անհարմարություններ էր պատճառում գիտնական-ընթերցողին: Նա ստիպված էր տող առ տող հաղթահարել դժվարընթեռնելի գերմաներեն ձեռագրի լուսատիպը, միաժամանակ վերծանել ձեռագրում սփռված հունարեն, ասորերեն ու արաբերեն վկայությունները՝ վերականգնելով անընթեռնելի տեղիներն անհրաժեշտ ծանոթագրություններով, եւ շուտով անտիպ աշխատության հայերեն թարգմանությունը ներկայացրեց հայ եւ օտար գիտական շրջանների դատին: Այդ թարգմանության եւ կատարված հետազոտության արձագանքն այնքան մեծ էր, որ 1966 թվականին Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» աշխատությունը լույս տեսավ ֆրանսերեն, եւ այդ ֆրանսերեն թարգմանության համար բնագիր ծառայեց Գեւորգ Աբգարյանի հայերեն թարգմանությունը (*Introduction à la Province de Parskahayk‘. Une etude inedite de J. Markwart; La Province de Parskahayk‘: [Գ. Աբգարյանի «Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը» աշխատության ֆրանսերեն թարգմանությունը] – Revue des Études Arméniennes (Nouvelle Série), Paris, 1966, T. III, էջ 245–314*). նման փաստը հազվագյուտ է գիտական թարգմանությունների պատմության մեջ:

Դեռ 2005 թվի սեպտեմբերի 6-ին, երբ Գերմանիայից հրավիրված հյուրերի մասնակցությամբ եւ Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի նախագահությամբ հետմահու հանդիսավոր նշվեց Մատենադարանի հնաբնակ դոկտոր Գեւորգ Աբգարյանի ծննդյան 85-ամյակը, ես իմ ելույթում նրա ժառանգների ուշադրությունը հրավիրեցի այն կարեւոր փաստին, որ բացի Մարկվարտի «Պարսկահայք նահանգի» հայերեն թարգմանությունից՝ Աբգարյանը վերծանել եւ ճշգրտել է նույնի գերմաներեն բնագիրը եւ փաստորեն այն լրիվ պատրաստ է հրատարակության գերմաներենով, որով սերտորեն իրար են կապվում գերմանացի եւ հայ երկու խոշոր հայագետների անունները:

Գ. Աբգարյանը մեկ անգամ չէ, որ գիտական շրջանների ուշադրությանն է արժանացրել գերմանացի հայագետների անտիպ մեծարժեք գործեր: ➥ *էջ 8*

Մկրտիչ Ավետիսյան

Սկիզբը՝ թիվ 9

Այսպես՝ Մ. Ավետիսյանը՝ որպես հեղափոխական գործի տեսաբան, իր հատուկ դիրքորոշումներն է արտահայտում եւ իր վերաբերմունքը հայտնում «կուսակցություն» երեւույթի եւ կուսակցական համակարգի նկատմամբ: 1893 թ. հրապարակած «Կուսակցութիւնների հետեւանքը մեր մէջ» առաջնորդող հոդվածում պարզաբանում է, որ հայ ազատագրական շարժման մեջ կուսակցությունների երեւան գալը շատերը մի մեծ չարիք նկատեցին, իսկ ժողովուրդն էլ այդ գործի մեջ տեղի ունեցած վնասներն ու վտանգները, հուսաբեկ վրիպումները կուսակցական ոգուն վերագրեց: Դա համարում է սխալ, քանզի հանրահայտ է, որ ժողովուրդը «ամեն դարերի մէջ ալ, միջոց չէ ունեցած մասնագետների նման ամեն մի դիպուածի բուն պատճառը գտնել եւ ատոր համար միշտ քմածին կարծիքներ ունեցած է պատահարների ծագման մասին» (*«Արմենիա», 1893 թ., թիվ 14*):

Ապա շարունակում՝ ինչպես սովն ու համաճարակները մի տեղ «հրէայներին վերագրած է, պատերազմները գիսաւոր աստղերին, հիվանդութիւնները՝ Սուրբերի բարկութեան, առեւտրի անկումը՝ գէշ տարի...», այնպես էլ հայրենասիրական գործից ծագած աղետների բուն պատճառը չկարողանալով գտնել՝ իր խելքին հասածի չափ որեւէ մեկնություն պիտի տար, բավական է, որ «պատասխանատուութիւնը իր վրայէն հեռանար. եւ ահա ամեն վնասները կը վերագրէր մի քանի կուսակցական անհատների» (*նույն տեղում*): Հրապարակախոսը փորձում է հիմնավորել, որ հեղափոխական գործի մեջ պատահած անհաջողությունների փոքր մասն է միայն կուսակցական սնափառության եւ երկպառակության արդյունք: Դա այդպես է առհասարակ, քանզի համոզմունքի ուժով կայացած կուսակցությունները, չնայած իրենց պատճառած հասարակական ցնցումներին, ավելի բարիք են առաջ բերում, քան չարիք, որովհետեւ «իրենք կը ծառայեն ամեն մի պատահած երեւոյթ զանազան կողմերէ քննելու եւ ոչ թէ միակողմանի վարելու. կուսակցական ոգին ուրեմն կրնար մեզ ալ օգտակար լինել յեղափոխական կնճռոտ գործը այլ եւ այլ կողմերէ ուսումնասիրելու» (*նույն տեղում*): Ուրեմն՝ բոլորովին անհիմն է եղած անհաջողությունները վերագրել կուսակցական ոգուն եւ համակարգին:

Ըստ Մ. Ավետիսյանի՝ միայն խաբեբա անձինք են, որ խորշում են ցույց տալ իրենց կուսակցական պատկանելությունը եւ ներկայանում են ոչ թե կուսակցական մարդ, այլ միաբանասեր, քանզի հաճախ կարելի է ժողովրդին խաբել միաբանասիրության քողով, բայց շատ քիչ անգամ կուսակցության անունով: Նշվում է, որ կուսակցությունների գոյություն չունենալով՝ ժողովուրդը «չդադրիր միամիտ, փոփոխամիտ եւ շլացող լինելէ, քանզի որ դեռ նոր ջանքեր կանէ քաղաքական կեանքի մէջ մտնելու» (*նույն տեղում*):

Ըստ հրապարակագրի համոզմունքի՝ կուսակցական համակարգն ունի հետեւյալ առավելությունները.

1. Եթե ժողովրդի մի մասը խաբված է եւ ընթանում է սխալ ուղիով, ապա «միւս կուսակցութիւններին յարող մասերը կուսակցական ազդեցութեան տակ ետ կը մնան այդ սխալ ճամբէ» (*նույն տեղում*):

2. Կուսակցական անկեղծ ոգին շահախնդիրների եւ մատնիչների ասպարեզը սահմանափակեց, որովհետեւ ամեն մի խելահաս եւ ջերմեռանդ կուսակցող իր կուսակցության պատիվը բարձրացնելու համար «աշխատեցաւ եւ կաշխատի զանոնք իր մեջէն դուրս հանել եւ հրապարակել» (*նույն տեղում*):

3. Կուսակցական նախանձախնդրությամբ գործող անձերն առավել եռանդով եւ հարատեւությամբ կգործեն, քան թե չեզոք կամ անգույն մարդիկ. «Երբ ոսկի յոյսերին չիրականալը թէ ժողովրդի, թէ չեզոք գործիչների եռանդը թուլցուցած է, ջերմեռանդ կուսակցողներն են մնացած հրապարակի վրայ իբր գործող» (*նույն տեղում*):

4. Կուսակցություններն իրենց տված շահով ու վնասով միջոց կտան տեսնելու, թե ում պետք է հետեւեն վստահությամբ եւ հետեւողականությամբ:

Սույն առաջնորդող հոդվածն ամփոփվում է այն եզրահանգումով, որ ժողովուրդը պետք է աշխատի իր ընտրողական կարողությունները զարգացնել եւ ընտրել այն կուսակցությանը, որն ամենից քիչ սխալներ կանի եւ ամենից շատ ծառայություններ «կը մատուցանէ բաղդատմամբ իր ստացած նպաստին... այդ ատէն թէ վնասակար կուսակցութիւնները կը տկարանան եւ թէ օգտակարը ժողովրդի ոյժն իր հետ ունենալով կրնայ աւելի ընդարձակ գործեր կատարել» (*նույն տեղում*):

Որպես քաղաքական շարժման տեսաբան՝ Մ. Ավետիսյանն ընդգծված վերաբերմունք դրսեւորեց հատկապես սոցիալիստական գաղափարախոսությունը ներկայացնող ուժերի հանդեպ:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած սոցիալիստական գաղափարները ներթափանցում են հայկական իրականություն եւ գրավում առանձին անհատների, նաեւ ժողովրդային փոքր հատվածների: ➥ էջ 7

1918 թ. մայիսյան հերոսամարտեր.

հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը եւ միասնական ոգու հրաշակերտ հաղթանակը

Սկիզբը՝ թիվ 9—10

Այսպիսով՝ հայ ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմը՝ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, դարձան հայ ժողովրդի ազատագրական մաքառումների թագն ու պսակը: Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը բազմիցս հայրենական պատերազմներ ու ազգային-ազատագրական մարտեր է մղել այլազգի զավթիչների դեմ, սակայն իրենց բախտորոշ նշանակությամբ առանձնանում են 1918 թ. մայիսյան հերոսամարտերը: Մայիսյան հերոսամարտերում՝ հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմում, մեր հաղթանակները նվաճվեցին փորձառու հայ հրամանատարների հմուտ ղեկավարությամբ գործող հայկական կանոնավոր զորամասերի ու աշխարհազորայինների, ժողովրդական լայն զանգվածների հերոսական ու կենաց պայքարի գնով: Մայիսյան հերոսամարտերում լավագույնս դրսեւորվեցին հայկական ռազմական արվեստի հաղթանակակիր ավանդույթները: Հայության մղած Հայրենական մեծ պատերազմին մասնակցեցին հայ ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչները՝ գյուղացիներ, մտավորականներ, հոգեւորականներ, արհեստավորներ, հայ սպաներ՝ անկախ քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելությունից՝ բոլոր տեսակի տարաձայնությունները մի կողմ դրած: Մասնակցում էին թե հասուն տարիքի կռվողներ, թե անփորձ աշակերտներ եւ ուսանողներ, ծերեր, կանայք ու պատանիներ: Հաղթանակների կերտման գործում իրենց կարեւոր ներդրումն ունեցան խիզախ հայուհիները, որոնք սննդամթերք, ջուր ու ռազմամթերք էին մատակարարում, ծառայում որպես գթության քույրեր:

Սարդարապատի ճակատամարտում տարած հաղթանակին իրենց մասնակցությունն են ունեցել գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, բառարանագիր Արարատ Ղարիբյանը, մաթեմատիկոս Բահաթուր Բահաթրյանը, նկարիչ Հակոբ Կոջոյանը եւ ուրիշներ, հայ եւ ռուս զինվորականների մի ամբողջ փաղանգ՝ գեներալ Բարաթովը, գնդապետներ Սպիցինը, Խմելնիցկին, Եֆրեմովիչը, Կարլիցկին, կապիտաններ Կլիչը, Շնեուրը, հույն Սակիլարին, Հասան-Ջալալյանը, Գեւորգ Մելիք-Շահնազարյանը, հետագայում գեներալ դարձած Արտակ Վարդանյանը, մարշալ դարձած Հովհաննես Բաղրամյանը (կոռնետ Վանո), բազմաթիվ մտավորականներ, ուսանողներ, ռազմական ու քաղաքական գործիչներ:

1918 թ. մայիսյան հերոսամարտերի ճակատագրական օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցն ու միաբանությունը, հավատարիմ մնալով Հայոց Եկեղեցու որդեգրած ազգապահպան ու հայրենասիրական սրբազան ուխտին, հաստատակամ ու միահամուռ դուրս եկան արնածարավ ոսոխի դեմ՝ վասն հավատո եւ վասն հայրենյաց: 1918 թ. մայիսի 19-ին, ներկայանալով Կաթողիկոսին, գեներալ Մ. Սիլիկյանն ապահովության համար նրան առաջարկում է հեռանալ Սեւան: Սակայն Վեհափառի որոշումը վերջնական էր ու անբեկանելի. «*Գնացեք, ասացեք, որ Կաթողիկոսը այս սուրբ վայրից պիտի չհեռանա: Ինչ որ իրեն ավանդ է տրված իր հայրերից, նա պարտավոր է պաշտպանել, եթե նույնիսկ հարկավոր լինի ընկնել այս Սուրբ տաճարի մեջ: Եթե հայ ժողովուրդը, հայ զինվորը չեն կարող պաշտպանել աստվածատուր եւ Միածնի էջքով կրկնապես սրբացած այս սուրբ վայրը, ինքը մենակ կմնա՝ նրան պաշտպանելու համար: Գնացեք, ասացեք, որ այդ հրամայեց Վեհափառը եպիսկոպոսներին: Ասացեք հայ բանակին, թե ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողնում Սբ Էջմիածինը: Եթե մեր զինվորները նրան չեն կարողանում պաշտպանել, եւ թուրքերը մտնելու են Սբ Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Սբ Իշման սրբավայրում: Հետո ծնրադրեց, համբուրեց Սբ Իշման վայրը եւ շատ տխուր արտահայտությամբ ասաց.*

—Տեր, օգնիր իմ գավակներին, որ հաղթեն թշնամուն: Ապա՝ կրկին դարձավ ժողովրդին եւ ասաց.

—Ինչպես Մեծն Վարդան Քրիստոսի անունով հաղթեց հեթանոսներին Տղմուտի ափերին եւ ընկավ հերոսաբար, նույնպես եւ այժմ պետք է հաղթենք»: Գեւորգ Ե. Վշտակիր հայրապետը ոչ միայն չհեռացավ Ս. Էջմիածնից, այլեւ կարգադրեց զոր ու գիշեր հնչեցնել բոլոր եկեղեցիների զանգերը եւ ոտքի հանել ամբողջ հայ ժողովրդին: Կաթողիկոսն իր մոտ է կանչում Գեւորգյան ճեմարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին, Գեւորգ եպիսկոպոս Չորեքչյանին եւ Էրզրումի առաջնորդ, ղարաբաղցի Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանին, Աղթամարի Եզնիկ վարդապետ Ներկարարյանին եւ Առաքելոց վանքի Թադեոս վարդապետ Հարությունյանին (երկուսն էլ անվրեպ կրակող քաջ ռազմիկներ էին), Գրամփա (այժմ՝ Ծիածան) գյուղի քահանա Հովհաննես Մկրտչյանին, օրհնում նրանց եւ ճանապարհում ռազմադաշտ: Անսալով Գեւորգ Ե. Սուրենյանցի կոչին՝ միաբաններից շատերը միացան համաժողովրդական կենաց-մահու պատերազմին: Այսպես՝ զորքի հետ ռազմաճակատ մեկնեցին նաեւ Ս. Էջմիածնի միաբաններ Կորյուն, Խորեն, Գյուտ, Ներսես, Դանիել վարդապետները, Հովհաննես վրդ. Տեր-Միքայելյանը: Վեհափառ Հայրապետից ռազմաճակատ մեկնելու թույլտվություն էին խնդրում Գանձակի փոխանորդ Լեւոն վարդապետ Պսերյանը եւ Հովսեփ վարդապետը, Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետը, ռազմաճակատ մեկնեցին հայրապետական դիվանի ծառայող Մնացական Գեւորգյանը եւ ճեմարանի ուսանող Ե. Աճեմյան-Վանեցին ու բազմաթիվ ճեմարանականներ: Ռազմաճակատում միաժամանակ կռվում եւ հոգեւոր ծառայություն էին կատարում զինվորական քահանաները՝ 1-ին գունդ՝ Գարեգին քահանա Մելիք-Ղազարյանը, հետագայում՝ Ստեփան քահանա Պապայանը, 2-րդ գունդ՝ Գարեգին քահանա Թադեւոսյանը: Սարդարապատի հերոսամարտի մասնակիցներին ոգեշնչում եւ աջակցում էր մարտերի անմիջական մասնակից Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյան):

Նա գտնվում էր ղարաբաղցիներից կազմված հինգերորդ գնդում, որն ստացել էր «Մահապարտներ» անունը: Գարեգին եւ Զավեն եպիսկոպոսները՝ խաչը ձեռքներին բարձր պահած, ընկնում են զորքի առաջ եւ հրամանատար գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանի հետ միասին մահապարտներին առաջնորդում ճակատամարտի: Սիմոն Վրացյանը Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին համեմատել է Վարդանանց պատերազմի հերոս Ղեւոնդ Երեցի հետ. «Էջմիածնի միաբանը շրջում էր մի մասից մյուսը եւ իր ճառերով բարձրացնում զորքերի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանանց պատմական օրերը...»:

Սարդարապատի հերոսական մարտերին Կոտայքի գյուղերի քաջորդիներից կազմված իր 250-հոգանոց ջոկատով մասնակցում է նաեւ Կոտայքի Թազագյուղի (այժմ՝ Նոր գյուղ) քահանա Զաքար Տեր-Հարությունյանը, Արմավիրի Ջաֆարապատ (այժմ՝ Գետաշեն) գյուղի քահանա Սահակը:

Բաշ Ապարանի ճակատամարտում հերոսացան մարտերին մասնակից Տաճատ քահանա Պողոսյանի եւ Հովհաննես քահանա Տեր-Միանասյանի կազմակերպած աշխարհազորային ջոկատները: Նրանց էին միացել նաեւ Գյուլլուջա (կամ Քյուլլուջա, այժմ՝ Վարդենիս) գյուղի քահանա Հովհաննեսը, Դովրի (այժմ՝ Զորավան) գյուղի քահանա Գրիգորը, Փարպի գյուղի քահանա Գեւորգը: ➥ *էջ 8*

ՎԵՐԱԲԱԿԱԽՈՍԸ

➥ *էջ 6*

1894 թ. «Արմենիայում» հրապարակած «Սոսիալիստական հոսանքը մեր մէջ» հոդվածաշարում նշում է, որ այս վերջերս սոցիալիզմ անվանված ընկերական վարդապետության մի քանի թերթեր սկսեցին հրատարակվել մեզանում: Նրանցից «Հնչակը», որ «սոսիալիստ կուսակցութիւնը մեր մէջ տարածելու համար հիմնուած է եւ սկզբէն լոկ սոսիալիստական բովանդակութիւն ունեցող յօդուածներով իջաւ հրապարակը, կերեւի թէ այժմ չգոհացուներ իր-մէ աւելի կարմիր հայ սոսիալիստներն, որոնք թերեւս կը գայթակղին երբ կը տեսնեն որ Հնչակը, գուցէ հակառակ իր կամքին ստիպուած է աչքի առջեւը իրականութեանը նայիլ»,— գրում է Ավետիսյանը (*«Արմենիա», 1894 թ., թիվ 68*):

Հեգնանքի են արժանանում սոցիալիստների մտամարզանքները, որով փորձում են ընթերցողի միտքը լցնել «կապիտալի, քոլէքտիվիզմի զրոյցներով» (*նույն տեղում*):

Նա նշում է՝ եթե իրենց հարցնես, այդ թերթերի ավելանալը կվերագրեն հայ ժողովրդի պահանջին: Սակայն զարմանալի է, թե ինչպես է եղել, որ մենք՝ հայերս, առանց գիտենալու «այսքան կարմիր սոսիալիստներ եղեր ենք. Գերմանիան, Ֆրանսիան, որոնց մէջ մի դարէ ի վեր ծանրացող գործարանական, դրամատիրական ճնշման եւ անհատի անսահման ազատութեան ծնունդն եղած է սոսիալիստական բողոքը, այդ երկիրների 4—5000 թերթերէ բաղկացած մամուլին մէջ 40—50 հատով սոսիալիստ թերթեր կը գտնուին» (*նույն տեղում*):

Սույն արտառոց, անբնական վիճակը հրապարակագիրը բացատրում է նրանով, որ հայի պահանջը, փափագը չէ, որ ներկայացնում են այդ թերթերը, այլ ուսանողների եւ մտավորականների որոշ մասի՝ եվրոպական արժեքներին ընդօրինակելու եւ նմանվելու անդիմադրելի ցանկությունը:

Անտարակույս է, որ արեւմտահայկական իրականության դժնդակ պայմաններում, նույնիսկ 19-րդ դարի վերջերին, դեռեւս ամուր պահպանվել էին ավատատիրական հարաբերությունների բաղադրատարրերը, քան այն նպաստավոր էր կապիտալիստական հարաբերությունների կազմավորման եւ զարգացման համար:

Ճշմարտացի է հնչում Մ. Ավետիսյանի այն դիտարկումը, թե սոցիալիստական թերթերն ու ուժերը, չբավարարվելով տեսությամբ, հայ իրականության մեջ են փոխադրել նաեւ իրենց գործնական մոտեցումներն ու սկզբունքները, եւ «....Թիւրքիայի դէմ պատրաստուող հայ յեղափոխական ուժերը բաժանելով սկսեր են մէկ մասը միւսին դէմ հանել եւ կռիւ մղել ընդդէմ.... չենք գիտեր ո՞ր գոյութիւն ունեցող դասակարգի» (նույն տեղում):

Ըստ «Արմենիայի» հրապարակագրի՝ ստեղծված այս իրավիճակում հայ սոցիալիստների գործելակերպը կշարժեր Դոն Քիշոտի նախանձն անգամ:

Հետագայում եւս պարբերականի էջերում ծավալվեց ակտիվ քննարկում՝ վերոնշյալ արժեքների գնահատմամբ: Հատկապես հետաքրքիր է նրա դիրքորոշումը Հայաստանի պետականության հետագա զարգացման ուղիների վերաբերյալ:

Մ. Ավետիսյանը, արտահայտելով իր եւ «Արմենիայի» խմբագրակազմի տրամադրվածությունն ու կողմնորոշումը, մատնանշում է, որ իրենք երբեք էլ միապետական, ազնվապետական եւ դրամատիրական կարգերի ջատագով չեն եղել, եւ միանգամայն անհիմն են այդ առումով սոցիալիստական թերթերի հնչեցրած մեղադրանքները. «Արմենիան» լոկ հայ հեղափոխական ներկա ձգտումների եւ ժամանակակից պետքերի թարգմանն է, իսկ այդ անմիջական պետք ու պահանջը հայ ազգը Թուրքիայի լծից ազատագրելու գործընթացն է: Հենց այդ գործընթացի մեջ է «Արմենիան», որը «ուշադրություն կը դարձուցէ, հայ ազգին ինքզինք ազատօրէ կառավարելու իրաւունքը նշանաբան ընտրելով» (*«Արմենիա», 1894 թ., թիվ 69*):

Եվ քանի որ ոչ մի դրամատիրական եւ հողատիրական դասակարգ հաստատելու կամ միապետական կառավարություն կազմելու ծրագիր ներկայացված չէ հանրությանը, եւ ոչ էլ Հայաստանում գոյություն ունեն «ազգային ազնուապետութեան կամ կալուածապետական որոշ դասակարգեր, որ Հայաստանի ազատութիւնը լոկ անոնց նպաստաւոր լինէր, ուրեմն կարելի էր ընդունել, որ ինքզինք կառավարելու ազատութիւնը հայ ժողովրդի համար կը նշանակէ ժողովրդապետական կառավարութիւն»

(*նույն տեղում*): Ուրեմն՝ չի կարելի եղած ուժը՝ հեղափոխական կուսակցությունները, բաժանել, պառակտել տարբեր բաղձանքների պատճառով, քանի որ հայ հեղափոխությունն ունի մեկ ընդհանուր՝ հասարակաց թշնամի՝ թուրքական բռնապետությունը, եւ այն տապալելուց, վերացնելուց հետո միայն ազատ հողի վրա կուսակցական-քաղաքական ուժերը կարող են բարգավաճել:

Շարունակելի

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Դոկտոր Գեւորգ Աբգարյանը...

➥ էջ 6

Այդպիսին է գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստի (1871–1962) «Միջին հայերենի բառարանը», որի մասին նա հանդես եկավ ԵՊՀ-ի «Բանբեր»-ում 1995-ին (*«Բանբեր Երեւանի համալսարանի», 1995, թիվ 2, էջ 183–186*): Այստեղ չեմ կարող չընդգծել Մատենադարանի ղեկավարության բարյացկամ, ես կասեի՝ նրբանկատ վերաբերմունքը, որ այդ հանդիսավոր օրերին, ի հիշատակ Գեւորգ Աբգարյանի, Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանի» վերծանումը եւ քննությունը վստահեց Գ. Աբգարյանի՝ դեռեւս սկսնակ որդուն՝ Վահագն Աբգարյանին. նա այս ընթացքում իր լեզվական գիտելիքներով լիովին արդարացրեց այդ վստահությունը:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

«Ս. Էջմիածինը միշտ կը բաշխուի ու չի նուազեր...»

ՎԱՉԳԷՆ Ա

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբան Թովմա վրդ. Խաչատրյանի «Սուրբ Էջմիածին. քրիստոնեական առաջին գմբեթավոր տաճարը» մենագրության (խմբագիր՝ Արսեն Հարությունյան) շնորհանդեսը: Երեկույթին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, գիտնականներ, հասարակական եւ մշակութային ոլորտի ներկայացուցիչներ:

Ողջույնի խոսքից հետո Մատենադարանի եւ Հրատարակչության տնօրեն Արարատ քհն. Պողոսյանը նշեց. «Երբ որեւէ գրքի շնորհանդեսի ես մասնակցում, առաջնահերթ պետք է երախտիքի խոսքեր ուղղել հեղինակին, մեկենասին եւ ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել գրքի հրատարակման աշխատանքներում: Սակայն այսօրվա շնորհանդեսն առանձնանում է: Ներկաներս եկել ենք ոչ միայն գնահատելու հեղինակին, այլեւ առաջնահերթ արժեւորելու գրքի բովանդակությունը, որ պետք է կարեւորվի յուրաքանչյուր բանախոսի խոսքում: Իսկ գրքի թեման, եթե կարելի է պատկերավոր ասել՝ գրքի «հերոսը», «գործող անձը», ամենքիս համար նվիրական եւ հայի ինքնության տեսանելի եւ շոշափելի խորհրդանիշը սրբության սրբոց Մայր տաճարն է»:



Գիրքը ներկայացրեց Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ աբդ. Կարապետյանը, իսկ բանախոսությամբ հանդես եկան ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դեւրիկյանը (բ. գ. դ.), Մայր տաճարի վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ամիրան Բադիշյանը եւ Մայր տաճարի որմնանկարների վերականգնման նախագծի հեղինակ Արժանիկ Հովհաննիսյանը: Լուսաբարապետության անմիջական օժանդակությամբ, հընթացս երեկույթի, շարականների եւ ժողովրդական երգերի կոմիտասյան մշակումների երգեցողությամբ հանդես եկավ Մայր տաճարի երգչախումբը:

Գրքի հեղինակ Թովմա վրդ. Խաչատրյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ գրքի լույս ընծայման եւ այս շնորհանդեսն արտոնելու համար, ինչպես նաեւ Մայր Աթոռի հրատարակչությանը՝ գիրքն ըստ պատշաճի հրատարակելու համար: Հավարտ շնորհանդեսի՝ օրհնության խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի երիցագույն միաբան Ոսկան արք. Գալփաքյանը:

1918 թ. մայիսյան հերոսամարտեր.

հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը եւ միասնական ոգու հրաշակերտ հաղթանակը

➥ էջ 7

Բաշ Ապարանի ռազմաճակատի պաշտպանության ամենաթեժ օրերին Տաճատ քահանայի՝ շուրջ 40-հոգանոց ջոկատն առաջինն է մարտի բռնվել թշնամու հետ:

Դարաքիլիսայի ճակատամարտում հայկական զինված ուժերին աջակցում էին աշխարհազորայիններին համախմբած Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ Մագիստրոս) եւ Դարպաս գյուղի քահանա Կոմիտաս Սարգսյանը:

Մայիսյան հերոսամարտերին մասնակից զինվորյալ միաբանները խոսքով ու գործով ապացուցեցին իրենց նվիրվածությունը հայրենիքին եւ հայ ժողովրդին:

1918 թ. հայ ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմում, անշուշտ, առանցքային էր Սարդարապատում տարած վճռորոշ պատմական հաղթանակը, քանզի թուրքական զորքերն այդպես էլ չկարողացան մտնել Արարատյան աշխարհի սիրտը՝ Երեւան ու Ս. Էջմիածին: Հայ ժողովուրդը միահամուռ ոտքի ելավ, ջախջախեց եղեռնաբեր ոսոխին ու թույլ չտվեց մտնելու եւ պղծելու Ս. Էջմիածինն ու Երեւանը, որոնք զերծ մնացին Ալեքսանդրապոլին ու Դարաքիլիսային բաժին ընկած վայրագությունները տեսնելուց եւ դառնության բաժակները քամելուց: Սակայն դա ամենեւին էլ չի նշանակում, թե մյուս հերոսամարտերը երկրորդական էին: Ո՛չ, իհարկե: Հերոսամարտերից յուրաքանչյուրն ամբողջացնում էր հաղթանակի մեծ խճանկարը կամ մաքառումների ոսկե շղթայի մեկ օղակը: Առանց խճանկարի այդ հատվածի, երանգի կամ շղթայի օղակի՝ ավարտուն, կատարյալ չէր լինի ամբողջ խճանկարը կամ շղթան: Ուստի այս հաղթանակները միշտ պետք է դիտարկել անքակտելի միասնության մեջ՝ իբրեւ մեկ ամբողջական կուռ համակարգ:

1918 թ. մայիսյան հաղթանակները հայ ժողովրդի ազատագրական պայքարի գլուխգործոցն են: Հայոց միասնական ոգու հաղթանակների շնորհիվ Արեւելյան Հայաստանի զգալի մասը փրկվեց թուրքական զավթումից, հայությունն ազատվեց կրկին ցեղասպանության ենթարկվելու եւ ֆիզիկապես ոչնչանալու դաժան ճակատագրից, հնարավորություն ստեղծվեց հայկական անկախ պետության վերականգնման համար, եւ 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Միով բանիվ՝ եթե, ըստ Դերենիկ Դեմիրճյանի, «Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի կենաց հարատեւության արտոնաթուղթը կնքեց», ապա հայ ժողովրդի մղած 1918 թ. Հայրենական մեծ պատերազմը՝ մայիսյան հերոսամարտերը, հայոց ազատ, անկախ, ինքնիշխան պետության կերտման հաղթաթուղթն ու իրավունքը դարձան եւ այդ պետության ու ամբողջ հայ ժողովրդի հարատեւության արտոնաթուղթը կնքեցին:

...Զանգեր, ղողանջեք,
Սրբազան քաջերին կանչեք
Այս արդար պատից:
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք
Սարդարապատից:

...Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չհանգանք՝դեռ կգանք,
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:

Պարույր Սեւակ, 1968 թ.

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սայաթնովյան «Վարդատոնի» շունչն էր թեւածում Թբիլիսիում

Աշխարհում տարածված կորոնավիրուսի համավարակը փոփոխություններ մտցրեց Թբիլիսիում ավանդական դարձած, իր հմայքն ու գեղեցկությունը չկորցրած սայաթնովյան «Վարդատոնի» տոնակատարության ձեւաչափում: Սայաթ-Նովա հայ գուսանի արվեստի մեծարման գեղեցիկ ավանդույթներով հաստատված տոնահանդեսը բազմազգ, կոլորիտային Թբիլիսիի բնակչության շրջանում եւ քաղաքի տարեգրությունում ունի իր հաստատուն տեղը, եւ արդեն 100 տարուց ավելի մայիս ամսվա վերջին կիրակի օրը իր շուրջն է հավաքում աշուղական երգի սիրահարներին, Սայաթ-Նովայի արվեստի երկրպագուներին, որոնք գալիս են Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի՝ կարմիր վարդեր խոնարհելու հայ մեծանուն աշուղ եւ ժողովուրդների բարեկամության երգիչ Սայաթ-Նովայի շիրիմին՝ սերունդներին փոխանցելով նրա մեծության գնահատականը, նրա երգարվեստի, աշուղական խոսքի անկրկնելի այժմեականությունը եւ անմահությունը:

Մայիսի 30-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վրդ. Դավթյանի օրհնությամբ եւ «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի նախաձեռնությամբ (ղեկավար՝ Գիսանե Հովսեփյան) սայաթնովյան «Վարդատոնը» մեկնարկեց Ամաղլեբա փողոցի թիվ 18 տնից՝ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի նախկին բնակարանից, որտեղ հավաքված հայ հասարակայնության ներկայացուցիչները՝ կարմիր վարդերով, քայլարշավ կատարեցին դեպի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի՝ Թբիլիսիի բնակիչներին մասնակից դարձնելով իրենց քաղաքի ծնունդ, ժողովուրդների բարեկամության ու սիրո երգիչ Սայաթ-Նովայի հիշատակի արարողությանը:

Քայլարշավի մասնակիցները, որոնց շրջանում էին Վրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետներ Հարություն Հայրապետյանը եւ Լեւոն Զարգարյանը, Պետրոս Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, գրողներ, բանաստեղծներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, հասարակայնության ներկայացուցիչներ, ծաղիկներ խոնարհեցին Մեյդան թաղամասում կանգնեցված Սայաթ-Նովայի խորհրդանշական հուշարձանին եւ մասնակիցը դարձան Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում թեմի առաջնորդի հանդիսապետությամբ մատուցվող Պատարագին: Պատարագիչը Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Զավեն վրդ. Յազիչյանն էր:

Պատարագիչ հայր սուրբն իր քարոզում անդրադարձավ օրվա խորհրդին, հավուր պատշաճի խոսեց եղիա մարգարեի տոնի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Տփղիսեցու եւ Թբիլիսիի արժանավոր զավակ Սայաթ-Նովայի անգնահատելի մեծության մասին, կարեւորեց դարավոր անցյալից մինչեւ օրս շարունակվող Հովհ. Թումանյանի, Գեւորգ Բաշինջաղյանի եւ Իոսեբ Գրիշաշվիլու նախաձեռնությամբ հիմք դրված Վարդատոնի տոնակատարությունը, որը հավերժ կմնա այս բազմազգ եւ բազմակրոն քաղաքում՝ որպես բարեկամության, սիրո եւ հարգանքի առհավատչյա:

Հավարտ սրբազան արարողության՝ ներկաները խմբվեցին եկեղեցու բակում հանգչող Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ: Այստեղ առաջնորդական տեղապահի նախագահությամբ եւ հոգեւոր դասի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ: Սայաթ-Նովայի արվեստի անմահության, անզուգական երգչի անկորնչելի հիշատակի մասին խոսք ասացին բոլոր ելույթ ունեցողները:

Այնուհետեւ ներկաները ծաղիկներով, սեր ու ժպիտով զարդարեցին անմահ Սայաթ-Նովայի շիրիմը: Ահա այսպես նշվեց հերթական՝ ձեւափոխված, սակայն անխափան «Վարդատոնը»՝ դառնալով Սայաթ-Նովա երգասաց բանաստեղծի նկատմամբ սիրո եւ նրա երգարվեստի անմահության դրսեւորում:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.06.2021 թ.
Տպաքանակը՝ 1225